ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԶԼՄ-ՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ք. Երևան, 2026թ.

ՆԱԽԱԲԱՆ

Մի կողմից **Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը** (այսուհետ՝ **Պալատ**), ի դեմս Պալատի նախագահ Սիմոն Բաբայանի, և մյուս կողմից **«Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների ասոցացիա» հասարակական կազմակերպությունը** (այսուհետ՝ **Միություն**), ի դեմս Միության խորհրդի նախագահ Լևոն Սուլթանյանի, (այսուհետ միասին՝ **Կողմեր**),

Բարձր գնահատելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով ամրագրված՝ կարծիքի արտահայտման ազատության, տեղեկատվության միջոցով տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության, իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի, ինչպես նաև փաստաբանական մասնագիտական անկախ գործունեության երաշխավորման կարևորությունը՝ որպես ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներ,

Հաշվի առնելով, որ լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք իրենց մասնագիտական աշխատանքի ընթացքում երբեմն ենթարկվում են ոչ իրավաչափ կամ անհամաչափ սահմանափակումների և ճնշումների, որոնք կարող են խաթարել վերջիններիս անկախ գործունեությունը,

Գիտակցելով, որ իրավական համայնքի և լրատվամիջոցների միջև համակարգված և կառուցողական համագործակցությունը կարող է նպաստել խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքի արդյունավետ իրականացմանը, իրավաբանական օգնության հասանելիության բարձրացմանը,

Կարևորելով իրավունքի գերակայության, մասնագիտական անկախության, փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքների վրա հիմնված համագործակցության զարգացումը,

Ձգտելով համատեղ ջանքերով նպաստել փաստաբանական և լրատվական գործունեություն իրականացնող անձանց իրավունքների խախտումների կանխարգելմանը, դրանց արդյունավետ արձագանքմանը, ինչպես նաև մասնագիտական կարողությունների զարգացմանը, հասարակության իրազեկվածության և իրավագիտակցության բարձրացմանը,

Համաձայնեցին հետևյալի մասին.

I. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն Հուշագրի առարկան մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, հատկապես՝ տեղեկատվության ազատության, ազատ խոսքի և իրավաբանական օգնության իրավունքների ոլորտներում Կողմերի համագործակցության հիմքերի սահմանումն է:

2. Կողմերը համագործակցում են լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնող անձանց իրավունքների խախտումների արձանագրման, հանրային արձագանքի ձևավորման, իրավական աջակցության կազմակերպման, մասնագիտական քննարկումների և համատեղ նախաձեռնությունների իրականացման ուղղություններով:

II. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

3. Լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնող անձանց պաշտպանության նպատակով Կողմերը կազմավորում են համատեղ համագործակցության հարթակ՝ **Փաստաբանների և լրատվամիջոցների իրավունքների պաշտպանության կենտրոն** (**այսուհետ՝ Կենտրոն**):

4. Կենտրոնը հանդիսանում է Կողմերի համագործակցության կազմակերպական ձևաչափ և չի հանդիսանում առանձին իրավաբանական անձ կամ Կողմերից որևէ մեկի կառուցվածքային ստորաբաժանում:

5. Կենտրոնի գործունեությունը հիմնվում է Կողմերի հավասարության, անկախության և փոխադարձ համաձայնության սկզբունքների վրա:

6. Սույն Հուշագրում «լրատվական գործունեություն իրականացնող», «լրագրող» հասկացություններն օգտագործվում են «Զանգվածային լրատվության մասին» օրենքով, իսկ «փաստաբան», «փաստաբանական գործունեություն իրականացնող» հասկացությունները՝ «Փաստաբանության մասին» օրենքով սահմանված բովանդակությանը համապատասխան:

III.ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Կենտրոնի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում փաստաբանների և լրատվական գործունեություն իրականացնողների իրավունքների խախտումների վերացմանը և կանխարգելմանը, առանց միջամտության և անկախ գործունեության երաշխավորմանը:

8. Կենտրոնը՝

1) արձանագրում է լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնողների գործունեության իրականացումը խոչընդոտելու դեպքերը կամ առերևույթ նրանց նկատմամբ մասնագիտական գործունեությամբ պայմանավորված այլ անօրինական գործողությունները.

2) հանրության և իրավասու մարմինների ուշադրությունն է հրավիրում լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնողների գործունեության նկատմամբ ոտնձգությունների, անհամաչափ և ոչ իրավաչափ

սահմանափակումների դեպքերի, դրանց ծագման պատճառների և մտահոգության առարկա այլ հարցերի առնչությամբ.

3) նպաստում է լրատվական և փաստաբանական գործունեություն իրականացնող անձանց համագործակցությանը:

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Կենտրոնի աշխատանքները համակարգելու նպատակով Կողմերը ձևավորում են հասարակական հիմունքներով գործող վեց անդամներից կազմված հանձնախումբ (**այսուհետ՝ Հանձնախումբ**)՝ յուրաքանչյուր Կողմից նշանակելով երեքական անդամ, որոնցից մեկը՝ համակարգող՝ յուրաքանչյուր կողմից:

10. Հանձնախումբը գործում է երկու տարի ժամկետով: Հանձնախմբի հաջորդ կազմի ընտրությունը կատարվում է 9-րդ կետում նշված կարգով:

11. Հանձնախմբի անդամի լիազորությունները կարող է դադարեցվել ինչպես նրա դիմումի հիման վրա, այնպես էլ նրան նշանակած համապատասխան Կողմի որոշմամբ:

12. Հանձնախումբը գործում է համերաշխության սկզբունքով:

13. Հանձնախումբն իրականացնում է Կենտրոնի նպատակների, ինչպես նաև բնականոն գործունեության համար անհրաժեշտ գործողությունները, ապահովում է Կենտրոնի կապը Կողմերի հետ:

14. Հանձախումբը՝

1) ապահովում է Կենտրոնի աշխատանքը.

2) հավաքում և մշակում է փաստաբանական և լրատվական գործունեություն իրականացնողների մասնագիտական գործունեության նկատմամբ անհամաչափ սահմանափակումների և միջամտությունների վերաբերյալ տեղեկությունները.

3) արձանագրված դեպքերի և մտահոգության առարկա հարցերի վերաբերյալ տեղեկացնում է Կողմերին և իրավասու այլ անձանց.

4) մտահոգության առարկա հարցերի կապակցությամբ կազմակերպում է քննարկումներ, հրավիրում է աշխատաժողովներ, հավաքագրում է կարծիքներ, դիրքորոշումներ, ներկայացնում է եզրակացություններ և առաջարկություններ.

5) լրատվական գործունեություն իրականացնողի իրավական պաշտպանության անհրաժեշտության դեպքում ապահովում է կապը նրանց և այդպիսի օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն հայտնած փաստաբանների միջև.

6) Կենտրոնի անունից իրավասու պետական կամ այլ մարմիններին հասցեագրում է գրություններ կամ այդպիսի առաջարկով դիմում է Կողմերին.

7) հանդես է գալիս հայտարարություններով և ապահովում դրանց տարածումը.

8) կազմակերպում և անցկացնում է փաստաբանական և լրատվական գործունեություն իրականացնողների միջև կապի և համագործակցության զարգացմանը նպաստող միջոցառումներ, ներառյալ՝ սպորտային կամ ինտելեկտուալ

խաղեր:

15. Կենտրոնին կարող է դիմել փաստաբանական կամ լրատվական գործունեություն իրականացնող ցանկացած անձ:

V. ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

16. Կենտրոնի գործունեության կազմակերպչական և տեղեկատվական ապահովումն իրականացվում է Կողմերի համաձայնությամբ՝ յուրաքանչյուրի հնարավորությունների և ռեսուրսների շրջանակում:

17. Կողմերը կարող են իրենց պաշտոնական կայքէջերում և տեղեկատվական հարթակներում հրապարակել Կենտրոնի գործունեությանը վերաբերող հայտարարություններ և տեղեկատվություն:

18. Կողմերի պաշտոնական կայքէջերում հրապարակվում են Կենտրոնի (Հանձնախմբի) հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները:

19. Կենտրոնի աշխատաժողովները և քննարկումները կարող են անցկացվել Կողմերի տարածքներում կամ փոխադարձ համաձայնությամբ այլ վայրում:

VI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Սույն Հուշագիրը չի ստեղծում Կողմերի միջև ֆինանսական կամ քաղաքացիաիրավական պարտավորություններ, եթե այդպիսիք առանձին գրավոր համաձայնությամբ չեն նախատեսվում:

21. Սույն Հուշագիրն արտահայտում է Կողմերի համագործակցության մտադրությունը:

22. Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

23. Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

24. Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել իր մասնակցությունը՝ մյուս Կողմին նախապես երեք ամիս առաջ գրավոր ծանուցելով:

VII. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ	«Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների ասոցացիա» ՀԿ
նախագահ՝ Սիմոն Բաբայան	խորհրդի նախագահ՝ Լևոն Սուլթանյան
_____	_____